

# ԱՅ ՆԱԽԱԳԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԿԻՏԱԼԻ ՄԻԽԱՅԻԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

## ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

### ՀԱՆՈՒՆ ԱՐՑԱԽԻ

#### ՈՒՂԵՐՁ

Սիրելի՛ հայրենակիցներ

Մարտի 31-ին Արցախի Հանրապետության նախագահի ընտրության օրն է: Սա կարևորագույն իրադարձություն է նախորդ շրջանին գնահատականներ տալու և մեր երկրի զարգացման նոր ուղեկիշները սահմանելու համար:

Անարդարության մթնոլորտը և սոցիալական բևեռացումը հասարակությունում առաջացրել են հիասթափություն և հոռետեսություն, ինչը դրդում է մեր հայրենակիցներին հեռանալ երկրից: Այս վիճակն անընդունելի է և պահանջում է փոփոխություններ:

Առաջադրվելով նախագահական ընտրություններում՝ ես պատրաստ եմ, բոլոր առողջ ուժերի աջակցությամբ ու ներգրավմամբ, իրականացնել արմատային բովանդակային բարեփոխումներ հասարակական կյանքի բոլոր ոլորտներում: Կան բարձրակարգ մասնագետների ներգրավմամբ մշակված ծրագրեր և խնդիրների կոնկրետ լուծումներ, որոնք մենք կներկայացնենք ընտրարշավի ընթացքում:

Հարգելի՛ արցախցիներ

Մեզ պարտադրված պատերազմում մենք համատեղ ուժերով և միասնականության շնորհիվ կարողացանք շատ կարճ ժամանակահատվածում լուծել մեր ֆիզիկական անվտանգության և հայրենիքի պաշտպանության հարցը, կառուցեցինք ու զարգացրեցինք մեր երկիրը, բայց դիվանագիտական դաշտում դեռ ամրագրված չէ մեր ամբողջական հաղթանակը:

Իմ սրբազան պարտքն եմ համարում, ձեզ հետ միասին, դնել պատերազմի վերջակետը և դիվանագիտորեն հասնել Արցախի միջազգային ճանաչմանը՝ սահմանադրությամբ ամրագրված տարածքներով:

Բազմաթիվ անելիքներ կան նաև ներքին կյանքում: Փառահեղ հաղթանակներին զուգընթաց, մենք չկարողացանք կյանքի կոչել նույնանման հաղթանակներ մեր թիկունքում, այն է՝ սոցիալական արդարության, տնտեսության, կրթության, առողջապահության, գյուղական համայնքների շենացման, Արցախի հանրապետության ողջ տարածքի համաչափ զարգացման, երիտասարդության ամբողջ ներուժի օգտագործման և այլ հարցերում:

Համոզված եմ և վստահ, որ միասին մենք կարող ենք հաղթահարել բոլոր դժվարությունները, զարգացնել մեր Արցախը և հաստատել արդարություն:

ՆՊԱՏԱԿԱԴՐՎԱԾ ԵՄ՝

-ապահովել Արցախի անվտանգության համակարգի արդյունավետության բարձր նշանոդ,

-ներգրավել նպատակային ներդրումներ ռազմավարական այն ոլորտներում, որոնք թույլ կտան ձևավորել գրավիչ գործարար միջավայր և ստեղծել նոր աշխատատեղեր,

- պայքարել կոռուպցիայի, հովանավորչության, մենաշնորհների և արատավոր այլ երևույթների դեմ,
  - տնտեսության զարգացմանը զուգահեռ էականորեն բարձրանել աշխատավարձերը և կենսաթոշակները, զինճառայողներին հատկացվող դրամական միջոցները,
  - ստեղծել բավարար պայմաններ՝ որակյալ և հասանելի կրթության միջոցով, բարձր պահանջարկ և ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում մասնագետներ պատրաստելու համար,
  - մեկնարկել հիմնարար ռազմավարական առաջապահական ծրագիր, քաղաքացու առողջությունը լավագույնս պահպանելու նպատակով
  - պետականի ու մասնավորի համատեղ ջանքերով մեկնարկել << Սեփական տանիք>> շինարարական նոր հավակնոտ ծրագիր,
  - մշակել հատուկ հասցեական ծրագրեր անապահով ընտանիքների արժանապատիվ կեցությունն երաշխավորելու նպատակով:
- Գործն է անմահ, լավ իմացեք,  
Որ խոսվում է դարեդար,  
Երևեկ նրան, որ իր գործով  
Կապրի անվերջ, անդադար

Չարգելի՛ ընտրող

Մենք տեր ենք կանգնելու մեր հաղթանակին, թույլ չենք տալու մեր ժողովրդի պառակտում և ապահովելու ենք բարեկեցիկ կյանք: Սուրը պատյանից հանելու առիթ թող չլին, իսկ խաչն էլ մեզ առաջնորդող:  
Ընտրություն՝ հանուն Արցախի: Ընտրություն՝ հանուն հաղթանակի:

Սիրով և հավատով՝ ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

### **Չիմնական նպատակներ**

Ստորև նշված նպատակները բխում են համայն հայության և մասնավորապես Արցախի Չանրապետության շահերից:

Որոնք են՝

- Արցախի Չանրապետության ներկայիս փաստացի սահմաններում անվտանգության ապահովում ՝ ուշադրության կենտրոնում պահելով Արցախի բաղկացուցիչ մաս կազմող և ադրբեջանական օկուպացիայի տակ գտնվող Շահումյանի շրջանը, Գետաշենի ենթաշրջանը, Մարտունու և Մարտակերտի որոշ հատվածները:
- Արցախի Չանրապետության լիարժեք ճանաչում ՀՀ և միջազգային հանրության կողմից՝ որպես հայկական երկրորդ պետականության սուբյեկտ:
- Արցախյան հասարակության հոգևոր և բարոյական արժեքների ամրապնդում:
- Ժողովրդավարական ինստիտուտների և քաղաքացիական հասարակության զարգացում՝ երաշխավորելով անկախ ՉԼՄ-ների ինստիտուտի կայացումը և պետական մարմինների գործունեության թափանցիկությունը:
- Չայաստանի Չանրապետության և Սփյուռքի հետ համակարգված կապերի զարգացում և ամրապնդում:

- Սկզբունքային և անգիջում պայքար տնտեսության մեջ պետական պաշտոնյաների ապօրինի միջամտության, բիզնեսի հետ սերտաճման, հովանավորչության և հափշտակումների դեմ:
- Սոցիալական արդարության և հասարակական համերաշխության հաստատման նպատակով ներդնել հասցեական սոցիալական ծրագրերի՝ ծրագրի հասցեատեր դիտելով ոչ թե ընտանիքի անդամին, այլ ողջ ընտանիքը և այս գործընթացը պետք է սկսել ողջ Արցախում բնակվող բոլոր ընտանիքների կարիքների գնահատմամբ:
- Անկախ դատական համակարգի կառուցակարգի փոփոխում՝ մասնագիտացված դատարանների ստեղծում և առանձնացված սահմանադրական դատարանի ձևաորում:
- ԱՀ քաղաքացիության մասին, բնակչության պետական ռեգիստրի մասին օրենքների ընդունում, որով կհստակեցվի պետության և քաղաքացու իրավահարաբերությունները:
- Ազատ մրցակցային մթնոլորտի ապահովում տնտեսության բոլոր ոլորտներում:
- Իշխանության ճյուղերի տարանջատման հիմունքների ապահովում՝ հավասարակշռման և զսպման մեխանիզմների հստակ կիրառմամբ:

### ***Պաշտպանության և անվտանգության ապահովում***

Արցախի համար երկրի պաշտպանությունը և ժողովրդի անվտանգության ապահովումը բացառիկ կարևորության խնդիրներ են:

Այդ նպատակով անհրաժեշտ է ունենալ ժամանակակից պահանջներին համապատասխան արդիական սպառազինություն ունեցող և մարտունակ զինված ուժեր:

ԱՀ-ի դեմ ցանկացած ոտնձգություն կասեցնելու, երկրի սահմանների պաշտպանունակությունն ավելի ամրապնդելու համար, անհրաժեշտ է անցկացնել նոր քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական և իրավական համալիր միջոցառումներ:

Չինված ուժերում անհրաժեշտ է կատարել մի շարք բարեփոխումներ, մասնավորապես.

ա) զինապարտությունը՝ պետություն- քաղաքացի նոր հարաբերությունների ձևավորմամբ, պետք է ընկալվի և կիրառվի իբրև ամբողջական շղթա՝ նախազորակոչային պատրաստություն- պարտադիր զինվորական ծառայություն- պահեստազոր տեսքով,

բ) ռազմավարական նպատակներին համապատասխան սահմանամերձ տարածքների և ենթակառուցվածքների առաջանցիկ զարգացում,

գ) աճող սերնդի շրջանում ռազմահայրենասիրական և զաղափարական դաստիարակության և ֆիզիկական պատրաստության ուժեղացում. երիտասարդը բանակ պետք է զորակոչվի լիովին գիտակցելով իր առաքելությունը ( ամեն մի երիտասարդ պետք է զգա, որ սեփական մասնակցությունը հաղթանակ կրելի իր ժողովրդին), իսկ ծառայությունից հետո վերադառնա որպես հասարակության համար լիարժեք, ակտիվ և առողջ մարդ,

դ) զինված ուժերում Հայրենիքին ծառայելու համար արժանավայել պայմանների ստեղծում:

ե) զինծառայողների, զոհվածների ընտանիքների, պատերազմի հաշմանդամների և վետերանների սոցիալական, առողջապահական խնդիրների համալիր լուծում,

զ) աշխատանքային ստաժի հաշվարկման պարագայում մարտական գործողությունների ժամանակ ծառայության մեկ օրը համարել երեք աշխատանքային օրվան համարժեք,

է) ժամանակակից, կենսունակ ռազմական արդյունաբերության ստեղծում,

ը) բանակաշինության գործում նոր մեթոդների կիրառում, համարձակ և ստեղծագործ լուծումների իրականացում, ինչը հնարավորություն է կտա ապահովել երկարատև խաղաղություն:

Հաշվի առնելով տարածաշրջանային իրողություններն ու առկա մարտահրավերները՝ ողջամիտ ժամկետներում հանրային քննարկումների հիման վրա ընդունել ազգային անվտանգության հայեցակարգ:

Վերակազմավորել Ազգային անվտանգության ծառայությունը՝ համապատասխան իր հիմնական գործառույթների և օրենքի պահանջների:

Կարևորելով նաև պարենային անվտանգությունը՝ ըստ ամենայնի զբաղվել անձեռնմխելի պաշարների ու պահուստային միջոցների ստեղծմամբ և դրանց պահպանման համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ:

### ***Արտաքին քաղաքականություն***

Արցախի Հանրապետության համար անընդունելի են դարաբաղա-ադրբեջանական հակամարտության կարգավորման ներկայիս խեղված ձևաչափը և մոտեցումները: Անհրաժեշտ է Արցախի մասնակցությամբ մշակել կարգավորման նոր սկզբունքներ: Արցախի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրն է Արցախի ժողովրդի համար անվտանգության երաշխիքների ապահովումը, այդ թվում Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը՝ որպես անվտանգության ապահովման ժամանակակից մեխանիզմ:

Անհրաժեշտ է Արցախի մասնակցությամբ մշակել կարգավորման նոր սկզբունքներ: Արցախի արտաքին քաղաքականության կարևորագույն խնդիրն է Արցախի ժողովրդի համար անվտանգության երաշխիքների ապահովումը, այդ թվում Արցախի Հանրապետության միջազգային ճանաչումը՝ որպես անվտանգության ապահովման ժամանակակից մեխանիզմ:

ա) Հայաստանի և ԱՀ միջև ռազմավարական դաշինքի ձևավորման մասին միջպետական պայմանագրի ստորագրում,

բ) ձգտել տարածաշրջանների պետությունների միջև ուժի կիրառումը բացառող պայմանագրի ստորագրմանը (խաղաղության պայմանագիր),

գ) նպաստել զինադադարի ռեժիմի պահպանմանը և ամբողջ տարածքում հակամարտ բոլոր կողմերից կրակի դադարեցմանն ուղղված գործունեության իրականացմանը,

ե) Ղարաբաղյան հակամարտության հետ կապված՝ ՀՀ և ԱՀ լիազորությունների և պատասխանատվության ոլորտների հստակ սահմանում,

զ) հակադարաբաղյան քարոզչության չեզոքացում, միջազգային հանրությանը ԱՀ-ում ընթացող ժողովրդավարական և այլ գործընթացների մասին արդյունավետ իրազեկում:

Ակտիվ համագործակցություն միջազգային տարբեր կազմակերպությունների հետ, հնարավորության դեպքում դրանց անդամակցում:

Հաշվի առնելով տարածաշրջանում Ռուսաստանի ավանդական դերակատարությունը, ինչպես նաև հայ-ռուսական դարավոր բարեկամությունը, այդ թվում Ռուսաստան-Արցախ դարավոր շփումները՝ համագործակցություն ծավալել բազմակողմ հարաբերությունների, հատկապես՝ անվտանգության, քաղաքական տնտեսական և հումանիտար բնագավառներում: Այսօր Ռուսաստանում բնակվում են հարյուր հազարավոր հայեր, ովքեր ունեն արցախյան արմատներ: Արցախը նրանց դիտում է որպես պոտենցիալ քաղաքացիներ և երկկողմ հարաբերությունների կամուրջներից մեկը: Այս հարաբերությունների զարգացմանը կնպաստի հոգևոր-մշակութային հարազատությունը:

Իրանի հետ, որպես հարևան պետության, ռազմավարական նշանակություն ունի համագործակցությունը ոչ միայն տնտեսական, մշակութային և հումանիտար ուղղություններով, այլև քաղաքական և այլ կապերի և համագործակցությամբ խորացմամբ:

Եվրոպական երկրների հետ հայ ժողովրդի դարավոր կապերը, այդ երկրներում այսօր մեծ հայակական Սփյուռքի առկայությունը, մեր տարածաշրջանում ԵՄ ազդեցությունը, ինչպես նաև Ֆրանսիայի Մինսկի խմբի համանախագահ լինելու փաստը, պետք է ակտիվացնել, քաղաքական, տնտեսական և մշակութային կապերը ԵՄ երկրների, հատկապես Ֆրանսիայի հետ:

Հաշվի առնելով հայ ժողովրդի և Միացյալ Նահանգների հարյուրամյակից ավելի պատմություն ունեցող կապերը, ԱՄՆ-ի ազդեցությունը մեր տարածաշրջանում, ԱՄՆ Մինսկի խմբի համանախագահ լինելու փաստը, ազդեցիկ հայ համայնքի գոյությունը, զարգացնել կապերը ԱՄՆ և նրա առանձին նահագների հետ: ԱՄՆ կազմակերպությունների հետ համակարգված աշխատանքներ տանել բիզնես ոլորտում կապերի արդյունավետության բարձրացման ուղղությամբ: ԱՄՆ առանձին նահագներին Արցախի ճանաչմանն ուղղված կոչերը ինչպես նաև երկկողմ հարաբերություններն առանձին նահագների հետ այս առաջնահերթությունից են:

### ***Արցախ-Հայաստան-Սփյուռք հարաբերություններ***

Արցախ- ՀՀ- Սփյուռք հարաբերությունների հիմքում պետք է լինի փոխադարձության սկզբունքը: Արցախը պետք է լինի ՀՀ և Սփյուռքի լիարժեք ու վստահելի գործընկերը, ինչը զգացմունքային դաշտից զատ հիմնված պետք է լինի հայության ընդհանուր շահերի վրա: Ափյուռքը չպետք է դիտվի որպես միայն ֆինանսական աղբյուր, կստեղծվեն հնարավորություններ Սփյուռքի մեր հայրենակիցների մտավոր ներուժն Արցախում օգտագործելու համար: Արցախը կպարտավորվի ակտիվորեն մասնակցել հայապահպանության գործին՝ մասնավորապես կաջակցի երիտասարդ սերնդի հայեցի կրթությանն ու դաստիարակությանը:

Կարևորվում են համահայկական ցանցային կառույցների ստեղծումը և արդեն գործող ցանցերի մասնակից դառնալը տարբեր բնագավառներում: Տարբեր երկրների հայկական կազմակերպությունների, Հայ Դատի գրասենյակների առջև պետք է դրվի Արցախի միջազգային ճանաչմանը հասնելու հարցը՝ որպես Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և ժխտողականության դեմ պայքարի հավասարազոր առաջնահերթություն:

Արցախի կյանքում Սփյուռքի մարդկային կապիտալի ներգրավման մակարդակը բավականին ցածր է: Այս խնդիրը լուծելու նպատակով պետությունը կխրախուսի տարբեր ծրագրեր՝

- կատեղծի հնարավորություններ հայ ուսանողների համար Արցախում ստաժավորում անցնելու և ցանկության դեպքում Արցախում հիմնավորվելու նպատակով,

- երբևէ Արցախը չտեսած հայ երիտասարդներին գոնե տասնօրյա ճամփորդության հնարավորություն կտրվի՝ համագործակցելով մասնավոր սեկտորի, հիմնադրամների հետ,

- Սփյուռքի և ՀՀ գիտական, վերլուծական շրջանակներին մասնակից դարձնել Արցախի տարբեր բնագավառների խնդիրների լուծման փնտրտուքներին,

- Սփյուռքի մասնակցության խրախուսում հասարակական սեկտորի զարգացման գործում:

### **Տնտեսություն**

Արցախի Հանրապետության անվտանգությունը և քաղաքացիների համընդհանուր բարեկեցությունը ուղղակիորեն պայմանավորված են երկրի տնտեսության դիսամիկ զարգացմամբ:

Տնտեսությունը պետք է կառուցվի այնպես, որ հանգեցնի հանրային հարաբերությունների արդարության, ներքին արդյունավետ քաղաքականության, այդ թվում՝ իրավունքի գերակայության, հավասար հնարավորությունների և տնտեսական մրցակցության ապահովման, կոռուպցիայի դեմ արդյունավետ պայքարի հետ:

Կառավարությունը նպատակ ունի Արցախի Հանրապետությունում ձևավորել ժամանակակից տնտեսական համակարգ՝ միևնույն ժամանակ կարևորելով պետության կարգավորող դերը տնտեսության արդյունավետության բարձրացման, մակրոտնտեսական կայուն աճի, պետական ռազմավարության, սոցիալ-տնտեսական արդարության, տնտեսական անվտանգության կառուցակարգերի մշակման և ապահովման գործում:

Միայն ՀՆԱ մակարդակը, կամ միայն տնտեսական աճի ցուցանիշը չի կարող արտահայտել տնտեսական համակարգի իրական վիճակը, որովհետև դրանք, ըստ էության, քանակական ցուցանիշներ են: Դրանց միջոցով հնարավոր չէ ստույգ պատկերացում կազմել ընդհանուր բարեկեցության մասին: Նախ անհրաժեշտ է սահմանել տնտեսական աճի որակ, ինչը բարիքների արտադրության այն մակարդակն է, որն ապահովում է հասարակության առողջապահական նորմերի պահպանմամբ՝ կենսագործունեության բոլոր ոլորտների ներդաշնակ զարգացումը:

Արդեն Սփյուռքի, հատկապես Ռուսաստանի գործարար մեր հայրենակիցների հետ կան նախնական պայմանավորվածություններ Արցախում խոշոր ներդրումներ կատարելու և հիմնադրամ ստեղծելու մասին և այդ հիմնադրամի միջոցով առաջիկա 5 տարում Արցախի տնտեսության մեջ կներդրվեն միլիոնավոր դոլարներ: Նման հիմնադրամ ստեղծելու նախնական պայմանավորվածություն կա նաև Հայաստանի գործարարների հետ:

Տնտեսության մեջ անհրաժեշտ է նախանշել հետևյալ գերակա ճյուղերը՝

Գյուղատնտեսություն

Պատասխանատու հանքարդյունաբերություն՝ միջազգային ստանդարտներին համապատասխան

Զբոսաշրջություն

Ծառայություններ

Տեղական հումքի վերամշակման արտադրություն

Տնտեսության զարգացումը ապահովելու նպատակով, փոփոխություններ են իրականացվելու նաև հանրային կառավարման համակարգում, որը ծավալվելու է հետևյալ ուղղություններով.

հանրային կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում,

հանրային ծառայությունների մատուցման որակի բարելավվում ,

մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարում,

հանրային ֆինանսների նպատակային և թափանցիկ կառավարում՝ ներառյալ պետական գնումներ:

Տնտեսության զարգացման համար ստեղծված Արցախի ներդրումային, գյուղի և գյուղատնտեսության աջակցման հիմնադրամների գործունեությունը ենթարկել անկախ աուդիտի, վեր հանել նախկինում տեղ գտած չարաշահումները և ապահովել հիմնադրամների մաքսիմալ թափանցիկություն, իսպառ բացառելով կոռուպցիոն ռիսկերը: Խոշոր ներդրումային ծրագրերը ընտրել բացառապես թափանցիկ և հասանելի հանրային քննարկման արդյունքում: Պարբերաբար ներկայացնել խոշոր ներդրումային ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվություններ: Գյուղական համայնքներում, հիմնադրամների կողմից սուբսիդավորվող ծրագրերի դեպքում, այդ համայնքների անշարժ ( գրավի առարկա հանդիսացող) գույքերի հետ մեկտեղ կտրամադրվի նաև պետական երաշխիք՝ առևտրային բանկերում գրավադրման հետ կապված խնդիրները բացառելու նպատակով: Ելնելով տարածքային համաչափ զարգացման անրաժեշտությունից, մինչև 20 կիլոմետր խորության (սահմանամերձ գյուղեր) գյուղական համայնքների բնակիչներին տրամադրել վարկեր և փոխառություններ մինչև 10տարի մարման ժամկետով, որի տոկոսները լրիվությամբ կսուբսիդավորվի պետության կողմից:

Այս բոլոր ուղղություններով մասնակցային և ներառական սկզբունքներով ձևավորելու ենք փաստարկված զարգացման քաղաքականություն, որոնք հնարավորություն կտան երկրի սոցիալ-տնտեսական կյանքում պետության միջամտությունը դարձնել հնարավորինս հիմնավորված ու արդյունավետ: Այս գործընթացներում ապահովելու ենք նաև թափանցիկություն և հաշվետվողականություն:

Տնտեսությունը ապամենաշնորհելով և ստեղծելով խաղի հավասար կանոններ՝ հանրային և տնտեսական քաղաքականության միջամտությամբ նպաստելու ենք արդյունաբերության, գյուղատնտեսության և ծառայությունների մատուցման ոլորտում երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը և նրանց զարգացմանը, այդ մրցունակ ուղղությունները թիրախավորելով՝ հասնել տնտեսության կառուցվածքի վերափոխման:

Այս ուղղությամբ մեր քաղականությունը իրականացնելիս չենք առաջնորդվելու միայն պահի առաջնահերթություններով, այլ գնահատելու ու հաշվի ենք առնելու նաև այդ գործողությունների ազդեցությունը հաջորդ սերունդների վրա:

Տնտեսությունն այս գիտակցությամբ զարգացնելուն զուգընթաց՝ պե-տու-թյան զարգացման կարիքներից ելնելով՝ հանքերի շահագործումն լինելու է նաև պետության հսկողության ներքո՝ սահմանելով ծավալների առավելագույն չափեր: Հանքարդյունաբերությունը լինելու է միջազգային ստանդարտներին համապատասխան:

Ուսումնասիրելով ներքին շուկայում պահանջարկի կառուցվածքը՝ կազմել բնակչության կողմից ամենապահանջված ապրանքների ռազմավարական և մարտավարական ցանկեր: Ամենապահանջված ապրանքների և ծառայությունների արտադրության խրախուսում՝ նաև անհրաժեշտության դեպքում հարկային արտոնությունների և վարկային հնարավորությունների միջոցով: Եթե հնարավոր չէ մասնավոր ներդրողի ներգրավումը նմանատիպ արտադրությունների մեջ, ապա պետության մասնակցությամբ նմանատիպ արտադրության կազմակերպում:

Տեղական արտադրանքի սպառման շուկայի ընդլայնման նպատակով պետության կողմից արտասահմանյան առևտրային ցանցերի հետ պայմանավորվածությունների ձեռքբերում: Արտահանման ելթակա մրցունակ ապրանքներ արտադրող յուրաքանչյուր տնտեսվարողին պետության կողմից լայն աջակցության տրամադրում, ինչպես նաև արտահանման ներուժը բացահայտելու նպատակով փորձնական քանակի արտահանման ծախսերի մի մասի սուբսիդավորում:

Գյուղատնտեսության ոլորտի պետական քաղաքականության հիմքում պետք է ընկած լինի հանրության պարենային անվտանգության հիմնահարցը՝ հաշվի առնելով նաև պատերազմի վերսկսման հավանականությունը: Արցախում գյուղատնտեսությունը պետք է միտված լինի ստանալ բնական, Էկոլոգիապես մաքուր արտադրանք՝ այն դարձնելով բրենդային : Գյուղատնտեսական արտադրանքի ներմուծումը պետք է հասցնել նվազագույնի՝ այն փոխարինելով տեղում արտադրված որակյալ արտադրանքով:

Կարելի է արձանագրել, որ գյուղատնտեսության վարման ավանդական ձևերը սպառել են իրենց և հետագա շարժընթացը պետք է գնա դեպի ինտենսիվացումը (չերմոցային տնտեսությունների հիմնում) և խոշորացումը:

Սրա համար թիվ մեկ մարտահրավեր ու թիվ մեկ ներուժ ենք համարում ոռոգման համակարգի հիմնավոր բարելավումը և արդիականացումը :

Առկա ոռոգման համակարգը ի վիճակի չէ գյուղացիական բոլոր տնտեսություններին ապահովել անհրաժեշտ քանակությամբ և որակով ոռոգման ջրով:

Այս ոլորտում խնդիրները լուծվելու են հետևյալ ռազմավարությամբ.

- Ջրերի կառավարման միասնական ծրագրի համակարգի ստեղծում, որը թույլ կտա կապակցել այս ոլորտին առնչվող տվյալներ տիրապետող պետական բոլոր կառույցների բազաները:  
Ներգրավվել ներդրողներ և մասնավոր-հանրային համագործակցությամբ նախաձեռնել ջրամբարաշինարարության ծրագրեր: Տասը տարվա ընթացքում կառուցել մի քանի առաջնային անհրաժեշտության ջրամբարներ,

- Ոլորտում կառավարման արդյունավետության բարձրացման միջոցով կանխատեսվող մոտ 20 տոկոս խնայողություններն անընդհատ ուղղել մաշված ենթակառուցվածքների վերականգնմանը,
- Ստեղծել ժամանակակից տեսական-կիրառական գյուղատնտեսության ոլորտի մասնագետների վերապատրաստման և ուսումնասիրտադրական կենտրոն:

Պետական աջակցությամբ, աստիճանաբար կկիրառվի միջազգային լավագույն փորձն ու նորագույն տեխնոլոգիաները, ծախսվող էներգիան փոխարինելով արևային և վերականգնվող այլ էներգատեսակներով՝ մինիմալի հասցնելով փոքր ՅԷԿ-երի թիվը:

Տնտեսության զարգացման գործընթացում համապատասխան կարևորություն են ստանալու նաև գների կայունության խնդրի արդյունավետ իրագործումն ու ֆինանսական համակարգի զարգացումը: Արցախում սոցիալ տնտեսական զարգացումը պետք է առանձնանա իր տնտեսական աճի որակով: Վերջինս է որոշում տեխնոլոգիական զարգացման մակարդակը, տնտեսության կազմակերպման արդյունավետությունը և մրցունակության աստիճանը:

Գյուղատնտեսության զարգացման լոկոմոտիվը պետք է լինի անասնապահությունը և այգեգործությունը: Անասնապահության զարգացումը ոչ միայն կապահովի երկիրը մսամթերքով և կաթնամթերքով, այլև հիմք կհանդիսանա թեթև արդյունաբերության զարգացման համար, ինչն էլ շրջաններում աշխատատեղեր ստեղծելու ամենաարդյունավետ ուղին է: Կաշվի, մորթու, բրդի արտադրությունը մեծապես կխթանի տեղական արտադրության զարգացմանը: Պետությունն իր վրա կվերցնի շուկաների ուսումնասիրումը, ինչպես նաև կխթանի վերամշակող ձեռնարկությունների, մթերման կետերի ստեղծումը: Գյուղացիների մոտ անասնապահությամբ զբաղվելը խթանելու նպատակով պետությունը պարտավորվում է մեծացնել կաթի ընդունման կետերի թիվը, կաշվի, բրդի, մորթու մթերման կետեր՝ կնքելով պայմանագրեր գյուղացիների հետ և նրանց երաշխավորելով արտադրողի հետ փոխհամաձայնեցված գներ:

Պետությունը կպարտավորվի սուբսիդավորված գնով գյուղացիներին վաճառել հորթեր, խոճկորներ, գառներ՝ շրջաններում ապահովելով որակյալ անասնաբուժական ծառայություններ: Պետությունը կօժանդակի գյուղացիներին՝ կերային բազա ստեղծելու համար: Հեռագնա արտավայրերի օգտագործման համար նպաստավոր պայմանների ստեղծում՝ արտավայրերի և կերահանդակների վարձավճարներից ազատմամբ:

Մասնավոր կապիտալի ներգրավմամբ շրջաններում կստեղծվեն ձկնաբուծական կայաններ: Արցախի գյուղատնտեսության խնդիրներից է լինելու ամբողջ բնակչությանը տեղական ձկնեղենով ապահովելը:

Գյուղացիների մոտ այգեգործությամբ զբաղվելը խթանելու նպատակով, պետությունը պարտավորվում է վարել այգեգործությանը միտված դրամավարկային մատչելի քաղաքականություն՝ օժանդակելով բերքի իրացման գործընթացում:

Պետությունը կտրամադրի դրամաշնորհներ՝ հողի բաղադրության ուսումնասիրման և համապատասխան մշակովի բույսերի սորտերի բաց ցանկ կազմելու համար:

Պետական աջակցություն գյուղատնտեսական ոլորտում կամավոր ապահովագրության համակարգի ստեղծմանը:

Գյուղատնտեսության զարգացման համար կարևորագույն նշանակություն ունի ոլորտում իրավասու մասնագետների ներգրավումը, ուսուցումը, ստաժավորումը: Արցախի գյուղատնտեսության զարգացման համար Արցախի նոր իշխանությունները ներգրավելու են ոչ միայն տեղի, այլ նաև Հայաստանի, Սփյուռքի լավագույն մասնագետներին, ֆինանսավորվելու է տեղացի մասնագետների և ֆերմերների ստաժավորումը և վերապատրաստումն աշխարհի առաջատար գյուղատնտեսական ձեռնարկություններում և տնտեսություններում: Մինևույն ժամանակ դրամաշնորհներ են տրվելու այն հասարակական կազմակերպություններին և գյուղացիական փոխօգնության միություններին, որոնք հաջողված ծրագրեր են իրականացրել գյուղական աղքատության կրճատման և գյուղատնտեսության զարգացման ուղղությամբ:

## **Չբոսաշրջություն**

Արցախում զբոսաշրջության ներուժը բավականաչափ բացահայտված, գույքագրված և օգտագործված չէ: Առկա չէ զբոսաշրջիկների տարբեր (այդ թվում՝ ներքին) խմբերի համար բազմազանեցված առաջարկ: Տուրիզմը չունի այն մասնակցությունը տնտեսության մեջ, որի ներուժն ունենք: Տուրիզմի ազդեցությունը հանրապետության շրջաններում խիստ սահմանափակ է:

Անհրաժեշտ է՝

- մասնավոր հատվածի հետ քննարկել և լրամշակել զբոսաշրջության մասին բոլոր իրավական ակտերը:
- մշակել զբոսաշրջության զարգացման ռազմավարություն, որի շրջանակում ակտիվ թիրախային մարքեթինգ իրականացնելու համար ընտրել տարբեր շուկաներ, որտեղ ակտիվ է հայկական սփյուռքը: Արցախի՝ որպես հայության ուխտավայրի, կերպարի ձևավորումը Սփյուռքում և ՀՀ-ում, կյանքի ընթացքում գոնե մեկ անգամ Արցախ այցելելը պետք է սերմանվի հայության մեջ:
- Առողջարանային զբոսաշրջության զարգացման նպատակով վերականգնել Շուշիի և Քարվաճառի առողջարանները, ներդնել առողջապահական տուրիզմի գաղափարը:
- Չբոսաշրջությունը դիտարկել, որպես տարածքային համաչափ զարգացման գործուն մեխանիզմ, որը կօգնի ինքնաբավ կայուն զարգացող համայնքներ ձևավորելուն:
- Չբոսաշրջությունը դիտարկել, որպես Արցախի միջազգային ճանաչման գործընթացի գործիքակազմ:
- Չբոսաշրջությունը հանրայնացնելու և միջազգային տուրիստական օպերատորների ընդգրկման հետ զուգահեռ, համայնքներում ստեղծել բավարար պայմաններ, զբոսաշրջիկներին գիշերակաց, սնունդ, զբոսավարների ծառայության, ակտիվ հանգստի կազմակերպման հնարավորություն, որը թույլ կտա համայնքում ապրող երիտասարդներին զբաղվել զբոսաշրջության ոլորտում եկամտաբեր ձեռներեցությամբ:

## **Տարածքային համաչափ զարգացում**

Պայքարել Արցախի Հանրապետությունում շարունակ խորացող տարածքային անհամաչափ զարգացման՝ որպես ազգային անվտանգության ուղղակի սպառնալիքի դեմ: Այդ նպատակով կառավարությունը համայնքային գոտիավորման և տեղական համեմատական առավելությունների վերլուծության, օրենսդրական

Նախաձեռնությունների, ներդրումային ու բիզնես միջավայրի կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակման միջոցով իրականացնելու է համայնքների զարգացման և մասնագիտացված ապակենտրոնացման կոնկրետ ծրագրեր՝

Դրանք ուղղված են լինելու.

- տեղական ձեռներեցության խթանմանը՝ սկսել աստիճանաբար ՓՄՁ հարկերը առավել կարիքավոր համայնքներին թողնելու գործընթաց, ծրագրերում ներդնել առավել ճկուն մեխանիզմներ հասցեականությունը և անհատական մոտեցումը ապահովելու նպատակով,
- ենթակառուցվածքների վերականգնմանը և զարգացմանը,<sup>2</sup>
- շրջաններում կրթական, մշակութային, սոցիալական և առողջապահական բարեփոխումների իրականացմանը,
- միջհամայնքային տնտեսական համագործակցության զարգացմանը:
- ԱՀ ամբողջ տարածքում և հատկապես սահմանամերձ համայնքներում կապահովվի անվճար, որակյալ հեռուստատեսային ծածկույթ, ինչը կներառի առաջին հերթին հայկական հեռուստաալիքներ:
- Անընդունելի է 21-րդ դարում, ունենալ նման որակի և գնի բջջային կապ և ինտերնետ:Երկրի ամբողջ տարածքում որակյալ և մատչելի հեռախոսային կապի և ինտերնետի ապահովումը պետության առաջնահերթություններից կլինի:
- Արցախի Հանրապետությունում բջջային կապի և ինտերնետի գինը և որակը պետք է չտարբերվի Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որակից:
- Ամբողջությամբ կվերանայվի բջջային օպերատորի հետ կնքված պայմանագրերը, որտեղ հիմնովին կվերանայվի մատուցվող ծառայությունների սակագները:

### **Կոռուպցիայի դեմ պայքարը**

Արցախի Հանրապետությունում տնտեսության զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման գործընթացների արգելակման հիմնական պատճառներից մեկը կոռուպցիան է իր բոլոր դրսևորումներով:

Կառավարությունը իր գործունեությամբ պայքարելու է կաշառակերության, պետական ունեցվածքի հափշտակության, ստվերային տնտեսության և հովանավորչության դեմ, որը կներառի՝

- դատական համակարգի անկախության և արդարադատության անխուսափելիության ապահովում,
- ավելորդ վարչարարության դեմ շարունակական պայքար և պետական վարչական անձնակազմերի օպտիմալացման ժամանակակից մեխանիզմների ներդրում,
- Կբարելավվի գույքի, եկամուտների և շահերի բախման հայտարարագրման համակարգը: Այդ նպատակով կվերանայվի և կընդլայնվի հայտարարատու պաշտոնատար անձանց և նրանց հետ փոխկապակցված անձերի ցանկը, շահերի բախման հայտարարագիր ներկայացնելու պահանջը կնախատեսվի բարձրաստիճան պաշտոնատար անձ չհանդիսացող՝ նաև հայտարարատու պաշտոնատար անձանց նկատմամբ, կվերանայվի հայտարարագրում սխալ

կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու, ինչպես նաև հայտարարագիր չներկայացնելու համար նախատեսված պատասխանատվության աստիճանը:

- Ամբողջովին կներդրվի իրական սեփականատերերի ինստիտուտը. կհիմնվի իրական սեփականատերերի ռեեստր:
- Բնակչության իրավագիտակցության և իրազեկման մակարդակի բարձրացում:

### **Կրթություն**

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը կրթել և դաստիարակել հայեցի և քրիստոնյա, հայրենասեր, պետության դերն ու նշանակությունը կյանքի կոչող սերունդ, որոնք և կպարտավորվեն ազգային ժառանգությունը փոխանցելու հետագա սերունդներին:

Հանրակրթության ոլորտի ներկա իրողությունը փոքրիշատե բոլորիս հայտնի է: Ուսուցման գործընթացը խմբակային բնույթի է, որը կազմակերպվում է ընդհանուր ճակատով և բացառում ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի գործուն ընդգրկվածության ապահովումը:

Փաստորեն ուսուցման գործընթացը բնույթով ոչ թե հանրակրթային է, այլ սելեկտիվ:

Ուստի կրթական համակարգում մեր առաջարկներն են՝

- Իրականացնել չընդհատվող կրթության գաղափարը, արդյունքում ապահովելով ուսուցչի դասաժամի հագեցվածություն, ծնողի ազատ ժամանակ, երեխայի օրվա ռեժիմի անթերի կազմակերպում:
- Ներդնել քվանտային ուսուցում, որը խթան կհանդիսանա ծրագրի բեռնաթափմանը:
- Հանրակրթական դպրոցում ուսուցումը պետք է նպատակադրված և ուղորդված լինի առողջ ապրելակերպի, երեխայի աշխարհընկալման ձևավորմանը և իրական արժեքների ճիշտ գնահատմանը, ինքնուրույն գործունեության համար անհրաժեշտ գիտելիքների նվազագույն ծավալի ապահովմանը:
- Պետությունը տարեկան հնարավորություն կընձեռնի մանկավարժների որակավորման բարձրացման դասընթացներ անցնել ինչպես Արցախում, այնպես էլ Արցախի սահմաններից դուրս:
- Հանրակրթական դպրոցներում ուսուցման ծրագրերին զուգընթաց կկազմակերպվեն բազմաբովանդակ մշակութային, արվեստա և արհեստագործական խմբակներ:
- Հաշվի առնելով ուսուցչի զբաղվածության հագեցվածությունը և ծանրաբեռնվածությունը, բնականաբար յուրահատուկ ուշադրություն կդարձվի աշխատավարձի այն չափին, որը հնարավորություն կընձեռնի արժանապատիվ ապրել:
- Մշակել և դպրոցական ծրագրերի մեջ պարտադիր մտցնել ,, Բաղաքացիական պաշտպանություն,, առարկան:
- Հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարաններում, սկսել փորձնական կրթական ծրագիր գերազանցության ձգտող աշակերտների համար, որի նպատակն է Արցախում ստեղծել ազգային, հայալեզու, բայց միևնույն ժամանակ միջազգայնորեն մրցունակ դպրոցական կրթական ծրագիր:

**Միջին մասնագիտական կրթության բնագավառ**

Այսօր մեր տնտեսությունը մասնագետների խնդիր է դնում, և երկրի կրթական համակարգը պետք է պատրաստ լինի ապահովել մասնագետների պատրաստումը: Այս առումով կարևոր են միջին մասնագիտական ուսումնարանները, որոնք պետք է նաև տեղակայվեն բոլոր շրջաններում: Գյուղատնտեսական ուսումնարանների որակի բարձրացումը և նոր մեթոդների ուսումնասիրումը, կօգնեն գյուղատնտեսության արդյունավետ զարգացման համար մասնագետների պատրաստմանը:

### **Բարձրագույն կրթության բնագավառ**

Արցախում բարձրագույն կրթության ցածր մակարդակը ազգային անվտանգության լրջագույն խնդիրներից է: Արցախյան համալսարանները պետք է դառնան մտքի ստեղծման, գաղափարների արտադրման դարբնոցներ, միևնույն ժամանակ համալսարանական հանրությունն անընդհատ պետք է հանդես գա առաջարկություններով և փորձագիտական գնահատականներով: Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է.

- Տնտեսության մեջ զգալի է բարձրագույն կրթության դերը, շատ կարևոր է վերլուծել տնտեսության գերակա ոլորտներում համապատասխան մասնագիտություններով ուսանողների ներգրավվածության և զբաղվածության ցուցանիշները՝ պարզելու համար ապագայում առանձին մասնագիտություններով շրջանավարտների պոտենցիալ պահանջարկը տնտեսության մեջ;
- Բարձրացնել մասնագիտական կրթության որակը և համապատասխանեցնել այն աշխատաշուկայի պահանջներին;
- Բարձրացնել կրթության մատչելիությունը հասարակության տարբեր սոցիալական խմբերի համար, ստեղծել հավասար հնարավորություններ, զարգացնել լրացուցիչ և շարունակական կրթություն ստանալու հնարավորությունները տարիքային տարբեր խմբերի ներկայացուցիչների համար;
- Ապահովել կրթության և գիտության բնագավառների բարձր որակավորում ունեցող կադրերի թվաքանակի կայուն աճ, միաժամանակ նպաստել «ուղեղների ներհոսքին»:

Համալսարանական ենթակառուցվածքներ

Մեր համալսարանները կունենան լիարժեք կրթական պրոցես կազմակերպելու համար անհրաժեշտ բոլոր ենթակառուցվածքները՝ բարձրորակ ինտերնետով, ուսումնական, վարչական մասնաշենքեր, հագեցած գրադարաններ, հանրակացարաններ, ուսանողական մատչելի սննդի օբյեկտներ: Այս ամենը ստեղծելու համար ներգրավվելու են ինչպես տարբեր հիմնադրամներ, բարեգործական, այնպես էլ պետական միջոցներ:

Կկառուցվի ուսանողական թաղամաս, որտեղ ուսանողները և դասախոսները կապահովվեն հանրակացաներով և մատչելի կտրամադրվեն բնակարաններ կարիք ունեցող դասախոսներին: Հանրակացարանային սենյակի կարիք ունեցող որևէ ուսանող չպետք է մերժում ստանա:

Ոչ մի ուսանող ֆինանսական պատճառներով չպիտի զրկվի բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունից:

### **Գիտություն**

Գիտությունը և, մասնավորապես, կիրառական գիտությունը կարևորագույն նշանակություն ունի երկրի տնտեսական զարգացման գործում:

Կարևորվելու է գիտության և տնտեսության կապի զարգացումը, արցախյան տնտեսվարողների կողմից գիտությանը ներկայացվող պատվերները:

Գիտության զարգացման ու գիտական ծրագրերի խրախուսման համար՝

Ստեղծել <<Արցախի ազգային ակադեմիա>> ,որի հետ համատեղ կմշակվի ազգային, ավանդական հայապահպանության և ռազմավարական այլ նշանակության հայեցակարգ:

Գիտնականների համար սահմանել ամենամյա հոնորարներ՝ միջազգային հեղինակավոր գիտական ամսագրերում տպագրված հոդվածների համար:

Ասպիրանտների համար սահմանել դրամաշնորհներ՝ իր ոլորտի պրոֆեսիոնալ միություններին անդամակցելու, գիտաժողովներին մասնակցելու, երիտասարդ գիտնականի մասնագիտական աճին նպաստող նպատակներով ծախսելու համար:

Նպաստել Արցախում միջազգային հեղինակավոր գիտական ամսագրերի՝ Արցախի գիտական հաստատությունների կողմից բաժանորդագրմանը:

Սահմանել նպատակային թեմատիկ դրամաշնորհներ հետազոտական խմբերի և անհատների համար:

Աջակցել արցախյան տարբեր լաբորատորիաներին հետազոտական, վերլուծական, գիտական աշխատանքների կազմակերպման համար:

Ստեղծել վեկտորային ֆոնդեր տեղական և արտասահմանյան հայկական կապիտալի ներգրավմամբ, որոնք կֆինանսավորեն նորարական նախագծերը և կաջակցեն հաջողված նախագծերի առևտրայնացմանը:

Պատանեկության և երիտասարդության մոտ գիտության նկատմամբ հետաքրքրության աճ ապահովելու համար խթանել հանրամատչելի գիտական գրականության ստեղծումը, համապատասխան արտասահմանյան գրականության թարգմանումը, հեռուստանախագծերի նախաձեռնումը և պատանի գիտնականների խմբակների ստեղծումը:

### ***Սոցիալական քաղաքականություն***

Պետության սոցիալական քաղաքականության վերջնական թիրախը համընդհանուր բարեկեցության և հանրային համերաշխության պետության կայացումն է: Սոցիալական քաղաքականության նպատակն է բարեկեցության ցանկացած մակարդակում գտնվող քաղաքացու համար ապահովել բարեկեցության, սոցիալական ապահովության ավելի բարձր մակարդակ:

Գլխավոր նպատակն է սոցիալական բարձր պատասխանատվության համակարգ ստեղծելը, որը համարվում է՝ աշխատունակ ցանկացած քաղաքացու իր աշխատանքի շնորհիվ բարեկեցիկ ապրելու հնարավորություն ընձեռող, իսկ անաշխատունակներին արժանապատիվ կյանքի որակ ապահովվող համակարգը :

Կենսագործունեության որևէ փուլում դժվարությունների հանդիպած քաղաքացիները պետք է զգան պետական հոգածություն՝ հնարավորությունների ողջ ծավալով: Գործնականում դա դրսևորվելու է աշխատատեղերի ստեղծման արդյունավետ քաղաքականության վարմամբ, աշխատունակ քաղաքացիների մասնագիտական հմտությունների զարգացմամբ և վերապրոֆիլավորման հնարավորությամբ: Պետության սոցիալական արդար քաղաքականության քայլերի հաջորդականությամբ հասնել աղքատության հաղթահարմանը և համընդհանուր բարեկեցությանը:

Այս նպատակից ելնելով՝

Կկիրառվի պրոգրեսիվ եկամտային հարկի ձևաչափ,  
ձգտելու ենք հարկման անհատական մոտեցման, որ քաղաքացիները հարկվեն տարբեր դրույքաչափերով՝ կախված տարիքից, խնամքին ունեցած անչափահասների կամ ծերերի թվից, այլ ակնհայտ սոցիալական հանգամանքներից,  
մշակելու ենք մեխանիզմներ, որոնց միջոցով ժողովրդի սեփականությունը հանդիսացող բնական ռեսուրսների օգտագործումից գալիք սերունդների համար կուտակվի մասնաբաժին,

Ներդնելու ենք բազմագործոն և ճկուն հարկային գոտիականություն և հասցեականություն՝ ապահովելու ազատ շուկայի պայմաններում տնտեսական ցածր մրցունակություն ունեցող տարածքների համաչափ զարգացումը, տնտեսությունից դուրս մնացած հանրույթների ներառումը:

Բարձրացնելու ենք սոցիալական ծրագրերի հասցեականությունը՝ ծրագրի հասցեատեր դիտելով ոչ թե ընտանիքի անդամին, այլ ողջ ընտանիքը և այս գործընթացը պետք է սկսել ողջ Արցախում բնակվող բոլոր ընտանիքների կարիքների գնահատմամբ,

Կշարունակենք ժամանակակից ենթակառուցվածքների և ծառայությունների ապահովման միջոցով սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց ինտեգրումը հասարակությանը

Մեր երկրի կայացման և տնտեսության զարգացման գրավականը սոցիալապես պատասխանատու գործատուներ, արհմիություններ և պետություն համագործակցությունն է, ընդ որում՝ նաև պետության արբիտրի դերի բարձրացումը:

Մենք նպատակ ունենք՝

նպաստել ոչ ֆորմալ/ինքնազբաղված աշխատողների ֆորմալ դաշտ տեղափոխվելուն՝ հնարավորություն տալով դառնալ հարկատուներ և օգտվել պետության կողմից տրամադրվող երաշխիքներից,

նպաստել աշխատողների ներկայացուցիչների (արհմիությունների) և գործատուների առավելագույն ներգրավվածությանը աշխատանքային ոլորտի ռազմավարության մշակման գործում, այդ թվում՝ նվազագույն աշխատավարձի սահմանման, սպառողական զամբյուղի հաշվարկման ընթացակարգերում:

Նման ռազմավարությունը պետք է մշակվի եռակողմ սոցիալական գործընկերության մակարդակով: Այսինքն՝ արհմիությունները յուրաքանչյուր տարի ներկայացնում են իրենց պահանջը՝ ըստ ոլորտների, նվազագույն աշխատավարձի մասին և այլ պայմաններ: Գործատուները և պետությունը իրենց հերթին ներկայացնում են առկա հնարավորությունները և հստակ, ըստ ճյուղերի՝ կնքում կոլեկտիվ պայմանագրեր:

Իրականացնել ազատագրված տարածքներում պետությանը պատկանող գյւղատնտեսական նշանակության հողերի անհատույց սեփականաշնորհում Արցախի բոլոր բնակիչներին, Արցախից դուրս ապրող Արցախյան պատերազմի բոլոր մասնակիցներին և Ադրբեջանից փախստական դարձած բոլոր հայերին՝ որպես փոխհատուցում, առանց օտարելու իրավունքի: Կադաստրային ձևակերպումների ծախսերը պետությունը կվերցնի իր վրա: Այս տարածքներում հողի նոր սեփականատերերը հինգ տարով կազատվեն հողի հարկից:

Կենսաթոշակների նվազագույն շեմը հասցնել նվազագույն աշխատավարձի չափին և իրականացնել ամենամյա ինդեքսավորում, հաշվի առնելով գրանցված միջին տարեկան գնաճը և դրամի արժեզրկման ցուցիչները: Իրականացնել

սպառողական զամբյուղի չափի իրական հաշվարկ՝ հաշվի առնելով ներկա սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Հրջկենտրոններում և գուղական համայնքներում կկառուցվեն անվճար մսուր-մանկապարտեզներ:

### ***Առողջապահություն***

Քաղաքացիների առողջության պահպանումը պետության կարևորագույն խնդիրներից է:

Արդյունավետ առողջապահության համակարգի ստեղծման նպատակով անհրաժեշտ է ունենալ հիմնարար ռազմավարական ծրագիր հետևյալ բաղադրիչներով՝

- բնակչության առողջությունը՝ որպես հասարակության զարգացման և ազգային անվտանգության գործոն ճանաչելը.
- հիվանդությունների կանխարգելման, մոր և մանկան առողջության, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բնակչության խոցելի խմբերի առողջական խնդիրների գերապատվությունը, ծնելիության և կյանքի միջին տևողության ավելացմանը նպաստելը.
- առողջապահության բնագավառում սոցիալական արդարության ու համերաշխության ապահովումը,
- բժշկական օգնության և սպասարկման մատչելիության, հասանելիության ու որակի ապահովումը.
- բնակչության առողջության կորստի հետ կապված ֆինանսական ռիսկերի նվազեցումը,
- առողջապահության բնագավառի քաղաքականության իրականացմանը բնակչության մասնակցության ապահովումը,
- առողջապահության համակարգի կայուն ֆինանսական բազայի ձևավորումը,

Առողջապահության համակարգի հիմնարար ռազմավարական ծրագիրը կունենա զարգացման հետևյալ ուղղությունները՝

- իրականացնել անցում մասնագիտական բուժօգնությունից դեպի առաջնային բուժօգնություն, կանխարգելում և առողջ ապրելակերպի սերմանում, ամրապնդում, և ընդհանրապես, բուժումից դեպի կանխարգելում,
- ստեղծել նախադրյալներ՝ հասարակության ֆիզիկական կուլտուրայի և առողջության բարելավման, մարդու առողջության համար անվտանգ ֆիզիկական միջավայրի ստեղծման ու ապահովման, առողջ ապրելակերպի քարոզչության և արմատավորման համար.
- ներդնել հիվանդությունների կանխարգելման, վաղ հայտնաբերման, ախտորոշման և բուժման, առողջ ապրելակերպ սերմանող առողջապահության գործուն համակարգ ու հանրային առողջությունն ապահովող միջավայր,
- հակազդել հանրային առողջությանը սպառնացող վտանգներին՝ թմրամոլություն, վարակիչ հիվանդությունների բռնուկումներ և համաճարակներ, զանգվածային թունավորումներ և այլն.
- կանխարգելիչ բժշկության կարևորագույն բաղադրիչներից են սկրինինգային հետազոտությունները, որոնցով հատկապես չարորակ հիվանդությունները

հայտնաբերվում են զարգացման վաղ փուլում և դրանով իսկ ստանում լիարժեք բուժում, ինչի շնորհիվ փրկվում է մարդու կյանքն, ու կանխվում հաշմանդամությունը: Հնարավոր և արդյունավետ բոլոր սկրինինգները շատ արագ պետք է ներդրվեն, դառնան մատչելի և իրականացվեն հանրապետության ամբողջ տարածքում: Սկրինինգային հետազոտությունների պատշաճ կազմակերպումը կարող է զգալիորեն մեծացնել պոլիկլինիկական ծառայության գործունեության արդյունավետությունը:

- լիարժեքորեն օգտագործել ինչպես հայաստանյան, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում գործող միջազգային ու հասարակական կազմակերպությունների ներուժը՝ առաջացող վտանգների և հիվանդությունների մասին արագ տեղեկանալու, դրանց տարածումը կանխելու միջոցառումներ իրականացնելու նպատակով.
- շարունակաբար բարձրացնել բնակչության առավել լայն շրջանակների, հատկապես, սոցիալական առումով խոցելի խմբերի իրազեկվածությունը՝ առողջապահության բնագավառի քաղաքականության և իրականացվող ծրագրերի մասին:

Քանի որ մեր բժշկական օգնության սպասարկման համակարգը չի ձևավորվում գրոյից, չի կառուցվում դատարկ շինհրապարակում, այլ պետք է վերակառուցվի և վերանորոգվի արդեն աշխատող, որոշակի կառուցվածք ունեցող համակարգի ներսում, ապա միակ տարբերակը, որը կլինի արդյունավետ ու չի տանի ընդհանուր կոլապսի՝ «փուլ առ փուլ, ոլորտ առ ոլորտ» կառուցումն է, երբ մի ոլորտում իրականացվող մոդերնիզացիան չի խանգարի մյուս ոլորտների աշխատանքին, և հակառակը:

- Անհրաժեշտ է ստեղծել բարենպաստ միջավայր պետական բժշկական ապահովագրության ներդրման համար, որը թույլ կտա էականորեն բարելավել բնակչության բժշկական սպասարկումը, բացառել բուժաշխատող-հիվանդ ֆինանսական հարաբերությունները, Պետությունն իր վրա կվերցնի խոցելի սոցիալական խավերի բժշկական ապահովագրության ծախսերը:
- Անհրաժեշտ է արմատապես վերափոխել հիվանդանոցների ֆինանսավորման համակարգը, որի արդյունքում համակարգի աշխատակիցների վարձատրությունը կապված կլինի իրենց աշխատանքի որակի և ծավալի հետ:
- Անհրաժեշտ է օրենսդրական փոփոխությունների միջոցով հստակեցնել բուժաշխատողների իրավունքները և պարտականությունները, անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերել բժշկական ասոցիացիաների հիմնադրմանը և զարգացմանը:
- Բոլոր հիվանդությունների և համախտանիշերի համար պետք է մշակվեն ախտորոշիչ և բուժական գործելակարգեր: Աշխատանքը պետք է իրականացվի բժշկական նեղ մասնագիտական ասոցիացիաների և բժշկական համալսարանի ամբիոնների աջակցությամբ: Վերջնարդյունքը կլինեն ապացուցողական բժշկության վրա հիմնված ուղեցույց-գործելակարգերը: Դրանք կտրամադրվեն բոլոր բժիշկներին ու բժշկագիտության զարգացմանը համընթաց պարբերաբար կթարմացվեն:
- Առողջապահության ոլորտի բոլոր մասնագետները պարտադիր պետք է անցնեն որակավորման քննություն: Քննական նյութը պետք է լինի

ապացուցողական բժշկության վրա հիմնված գործելակարգերի իմացությունը: Բնությունը պետք է լինի թեստային-համակարգչային՝ կազմված բժշկական որակավորման՝ աշխարհի լավագույն քննական թեստերի նմանությամբ:

- Շրջաններում և համայնքներում որակյալ բժշկական ծառայությունները լրացնելուն միտված լինելու է շրջիկ բժշկական հաստատությունների

### ***Բնապահպանություն***

Բնության պահպանությունը, դրա մշտական բարելավումը մեր գերակա առաջնահերթությունն է: Մենք ընդունում ենք այն սկզբունքը, որ շրջակա միջավայրը, բնությունը և նրա մաս կազմող բոլոր կենսաբանական օրգանիզմները մշտական հոգածության և պաշտպանության կարիքն ունեն: Բնության մեջ ոչ մի տեսակ գերակա չէ մյուս տեսակների հանդեպ: Մարդը և մյուս բոլոր կենսաբանական օրգանիզմներն ու բնության տարերը պետք է ապրեն ներդաշնակության, փոխօգնության և հավասարաչափ փոխազդեցության սկզբունքներով:

Տնտեսական առումով Արցախի Հանրապետության բնական պաշարները՝ ընդերքը, հողը, ջուրը, օդը, բուսական, կենդանական և այլն, նրա ժողովրդի սեփականությունն են, ընդ որում՝ ո՛չ միայն ներկա ժամանակում, այլև մեր սերունդների, որոնք հնարավոր է՝ նոր մոտեցումներ որդեգրեն իրենց սեփականությունը տնօրինելու հարցում: Բնությանը և բնական պաշարներին վերաբերող հարցերում անհրաժեշտ է ելնել այն եզրույթից, որ «շրջակա միջավայրը մենք ո՛չ թե նվեր ենք ստացել մեր ծնողներից, այլ պարտքով վերցրել ենք մեր զավակներից»: Ուստի բնական պաշարների օգտահանման, բնօգտագործման հարցերում հարկավոր է առաջնորդվել գալիք սերունդներին պատկանող սեփականությունը չյուրացնելու, դրա օգտահանումից նրանց համար ապագայի լավ պայմաններ ստեղծելու սկզբունքներով:

Բնական պաշարների օգտագործումը, ի տարբերություն այլ ոլորտների, իր ամբողջ ծավալով հենված է հանրային ունեցվածքի բազայի վրա, և անարդար կլինի, որ այն հավասար պայմաններով հարկվի տնտեսական գործունեության այլ ձևերի հետ: Բնական պաշարների շահագործումից և արդյունահանումից առաջացող արդյունքը բաշխվում է սոցիալական արդարության սկզբունքով և չի կարող ծառայել կլանային կամ ինչ-որ արտոնյալ փոքր խմբերի, կազմակերպությունների կամ կորպորացիաների՝ լինեն դրանք տեղական թե միջազգային:

Մենք դեմ ենք ընդերքի անխնա շահագործմանը, իսկ հանքարդյունաբերական արդեն իսկ գործող համալիրի դեպքում առաջարկում ենք որդեգրել վերը նշված հարկային քաղաքականությունը և վերացնել հարկային արտոնություններ տալու հին սովորույթները:

Մենք դեմ ենք գետերի չորացման հաշվին փոքր ՀԷԿ-երի շահագործմանը, իսկ արդեն իսկ գործող ՀԷԿ-երի դեպքում առաջարկում ենք որդեգրել վերը նշված հարկային քաղաքականությունը, համապատասխանեցնել իրական նորմատիվներին, հակառակ դեպքում պետք է փակվեն:

**Այս առումով մենք կարևորում ենք հետևյալ քայլերը.**

- փուլ առ փուլ բարձրացնել բնօգտագործման վճարները, ռեկուլտիվացիոն դրամագլխի վճարները, արտանետման վճարները: Կոշտ և համարժեք քաղաքականություն վարել միջավայրի աղտոտման հարցում,
- արմատապես բարեփոխել շրջակա միջավայրի ազդեցության գնահատման փորձաքննության համակարգը՝ գիտականորեն լիարժեք քննված, փաստարկված, ապացուցված քաղաքականություն իրականացնելու նպատակով,
- Ներդնել անտառային մոնիթորինգի համակարգը:
- անտառամերձ համայնքների բնակչությանը ներգրավել որպես անտառների պահպանությունից ստացվող տնտեսական օգուտի անմիջական շահառու: Պետական կապիտալ ներդրումներով խթանել Էկոբիզնեսի զարգացմանը,
- հողահանդակների օգտագործման ոլորտում իրականացնել լիարժեք հսկողություն, պլանավորում՝ բացառելու հողերի դեգրադացիան և Էրոզիան,
- բնության հատուկ պահպանվող տարածքների հիման վրա ստեղծել կենսոլորտային պահպանավայրեր, որոնք արդի աշխարհում զբոսաշրջային կարևոր այցեքարտ են և հնարավորություն կտան շրջակա տարածքի բնակիչներին տնտեսական առավել մեծ օգուտ ստանալ բնությունը պահպանելուց՝ քան ստանում են գերշահագործումից,
- դիտարկել արագաճ ծառատեսակներով արդյունաբերական նպատակով անտառտնկման հնարավորությունը:

### ***Քաղաքացիական հասարկության զարգացում***

Իշխանության ճյուղերի և ամբողջ պետական համակարգի գործունեությունը պետք է երաշխավորի՝

Քաղաքական ընդդիմության արդյունավետ գործունեությունը, այլակարծությունը, խոսքի ազատությունը և անկախ լրատվամիջոցների ինստիտուտի ամրապնդումը:

Հասարակության մեջ քաղաքական մշակույթի արմատավորմանն ուղղված ծրագրերի իրականացումը, այդ թվում տարբեր թեմաներով արդյունավետ հանրային քննարկման ծավալումը:

Մարդու իրավունքների պաշտպանության համակարգի բազմատարրության ամրապնդման նպատակով իրավապաշտպան հասարակական կազմակերպությունների հետ հանրօգուտ համագործակցությունը:

Մրցութային հիմունքներով պետական դրամաշնորհներից և այլ հնարավորություններից օգտվելը հասարակական կազմակերպությունների, նախաձեռնությունների և քաղաքացիների այլ օրինական միավորումների համար՝ երկրի կառավարմանն ու հանրային կյանքին լիիրավ մասնակցության ապահովումը:

### ***Մշակույթ***

Ազգային անվտանգության, արժեհամակարգի ձևավորման, ընդհանրապես երկրի զարգացման և Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման խնդիրներում պետք է ամենաբարձր մակարդակով կարևորվի մշակույթի դերն ու նշանակությունը: Անհրաժեշտ է իրականացնել համակարգված ու ճկուն պետական քաղաքականություն, որը պետք է բխի երկրի զարգացման ռազմավարությունից: Նման ռազմավարությունը հնարավորություն կտա պահպանելու և սերունդներին փոխանցելու հոգևոր և ազգային արժեքների դիմագիծը:

Անհրաժեշտ է ստեղծել մշակույթային կրթության նոր համակարգ, քանզի մշակույթը ազգային արժեհամակարգի հիմքն է: Ապահովվել մշակութային կրթությունն իրականացնող հաստատությունների համակարգված գործունեություն, ստեղծագործական ներուժի բացահայտում ու զարգացում: Հնարավորինս ավելի հաճախ ներկայացնել միջազգային տարբեր հարթակներում Արցախի մշակութային արժեքները, որը կդառնա Արցախի Հանրապետության այցեքարտ:

### **Հոգևոր կյանք**

Արցախում օրենսդրորեն ճանաչել Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանման գործում՝ ըստ ամենայնի հարգելով և երաշխավորելով նաև երկրում Սահմանադրությամբ ամրագրված յուրաքանչյուր անձի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունքը:

Արցախի Հանրապետության և Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու հարաբերությունները կարող են կարգավորվել օրենքով:

Աջակցել Արցախի տարածքում խոնարհված եկեղեցիների ու վանքերի եկեղեցիների վերականգնման, դրանցում հոգևոր սպասավորների ծառայության ապահովման գործընթացին:

### **Երիտասարդական պետական քաղաքականությունը.**

Անհրաժեշտ է թափանցիկ, հասանելի և արդյունավետ ռազմավարության մշակում եւ գործարկում, որը նախագծված է երիտասարդների համար, երիտասարդների կողմից, հաշվի առնելով նրանց պատկերացումները՝ իրենց եւ երկրի ապագայի մասին:

- անհրաժեշտ է կառուցվի երիտասարդների կարիքների ուսումնասիրման, խորքային վերլուծության եւ փաստարկված հենքի վրա մշակված լուծումների վրա: Այն պետք է հոգա երիտասարդների կարիքները և առավելագույն պայմաններ ապահովի նրանց ներուժի կիրառման համար,
- պետք է հիմնված լինի սոցիալական արդարության և ներառականության սկզբունքների հիման վրա: Ռազմավարությունը պետք է լինի առավելագույնս ներառական և հասնեն առավել խոցելի սոցիալական խմբերի երիտասարդներին,
- պետք է իրականացնի տաղանդների կառավարման արդյունավետ ծրագրեր: Մեծ ստեղծագործական, մտավոր և գիտական ներուժ ունեցող երիտասարդները պետք է ստանան լիարժեք պետական աջակցություն՝ իրենց կրթության և ինքնաիրացման, աշխատանքի ապահովման համար,
- պետք է մոտիվացնի երիտասարդին՝ ներգրավվելու քաղաքական և քաղաքացիական և ազգապահպան գործընթացներին, բարձրացնի տեղեկացվածության մակարդակը երկրում առկա խնդիրների ու դրանցով զբաղվող նախաձեռնությունների մասին, նպաստի իրավագիտակցության բարձրացմանը,
- պետք է ուղղված լինի Արցախի բոլոր համայնքների և երիտասարդական խմբերի համաչափ ու ներդաշնակ զարգացմանը. պետք է վերացվեն մայրաքաղաքի և շրջանների, քաղաքի և գյուղի հնարավորությունների ու ենթակառուցվածքների միջև առկա ծայրահեղ տարբերությունները,

- անհրաժեշտ է լինի թափանցիկ և վերահսկվող: Պետք է մշակվեն և գործարկվեն միջոցների ծախսման վերահսկման ու ծրագրերի արդյունավետության գնահատման հստակ համակարգեր:

### **Սպորտ**

Պետության մարզական քաղաքականության հիմնական նպատակը ֆիզիկապես առողջ քաղաքացիներ ունենալն է: Այդ նպատակով՝

-կառուցել շրջաններում և թաղամասերում մարզահրապարակների, **մարզադահլիճների** կառուցումը, բակային սպորտի զարգացումը,

-օժանդակել մարզական միություններին և լուրջ արդյունքներ ցույց տված մարզիկներին

-կազմակերպել մարզական ճամբարներ,

-մասսայականացնել սպորտը բոլոր տարիքային խմբերի համար, ինչը հնարավորություն կտա նվազագույնի հասցնել թմրանյութերի, ալկոհոլի և ծխախոտի օգտագործումը,

-խթանել պրոֆեսիոնալ սպորտը:

**ՎԻՏԱԼԻ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

---